ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՈԼՈՐՏ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՌԱՋ

Մեր ժողովրդի ազգային զարթոնքը արտահայտվում է մեր կյանքի բոլոր ասպարեզներում: Դեպի արմատները վերադարձը, ազգային դիմագիծը վերագտնելու խնդիրը առաջնային է դարձել. ժողովուրդը ճիգ է անում վերականգնելու իր պատմական հիշողությունը՝ պատմությամբ ինքնահաստատում ձեռք բերելու և հայացքը դեպի ապագան հառելու համար:

Այս տեսակետից մեծ նշանակություն ունի հոգևոր դաստիարակությունը: Հասարակության բարոյալքման պատճառներից մեկն էլ այն է, որ դարերով քրիստոնեական ավանդությամբ ապրած ժողովուրդը արհեստականորեն կտրվեց իր ավանդություններից՝ դառնալու համար համայնական տան անդեմ բնակիչ: Իսկ քրիստոնեությունը դարերով դարձել էր մեր ժողովրդի միս ու արյունը, ազգային ինքնուրույնության հենակետն ու մեզ պարտադրված դառն ճակատագիրը արժանապատվությամբ դիմագրավելու հոգևոր մխիթարանք: Ուստի օրինաչափ էր, որ ազատ շնչելու առաջին իսկ հնարավորությամբ ժողովուրդը պիտի տենչար հագեցնել իր հոգևոր ծարավը: Դա արտահայտվեց բազմաթիվ գործող եկեղեցիներ բացելով, ազգային-եկեղեցական տոներին վերադառնալու ձգտումով և նաև, ու թերևս ամենակարևորը, Մայր Եկեղեցին ճանաչելու անհրաժեշտությամբ: Պետք էր մանավանդ նոր սերնդին ցույց տալ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու մեծ դերը մեր ժողովրդի կյանքում. երբ ունեցանք պետականություն, Եկեղեցին միշտ եղավ պետականության զորավիգ, երբ չկար պետականություն, Եկեղեցին արժանապատվությամբ համատեղեց ժողովրդի հոգևոր և աշխարհիկ իշխանության պատասխանատվությունը: Պետք էր ճանաչել Եկեղեցին, որպեսզի հոգևոր զարթոնքը գիտակցված լիներ:

Այս նպատակով ահա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ կազմվեց հատուկ հանձնաժողով, որի նպատակն է ընդառաջել զանազան բարձրագույն ուսումնական հաստատությունների, դպրոցների և կազմակերպությունների դիմումներին և կազմակերպել Հայ Եկե-

ղեցու պատմության և քրիստոնեական դաստիարակության դասընթացներ: Կարճ ժամանակում կազմվեց ընդհանրական ծրագիր, որոշվեցին դասախոսները և նախապատրաստվեցին դասընթացները. նախատեսվում էր նույն ծրագիրը իրագործել տարբեր ուսումնական հաստատություններում շրջանաձև դասախոսությունների ձևով՝ համակարգված դասացուցակով:

Վեհափառ Հայրապետը նախաձեռնեց վարել առաջին հանդիպումները՝ իր հայրապետական պատգամը բերելու դասախոսությունների մասնակիցներին:

Նորին Սրբությունը իրերահաջորդ երեք հանդիպում-դասախոսություններ ունեցավ Երևանի մաթեմատիկական հաշվիչ մեքենաների գիտահետազոտական ինստիտուտում, Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների և պոլիտեխնիկական ինստիտուտներում: Վեհափառ Հայրապետը վեր հանեց կրոնի դերը մարդու բարոյական դաստիարակման մեջ, հանգամանորեն խոսեց հայ ժողովրդի քրիստոնեացման, Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու մասին: Նորին Սրբությունը հատուկ ուշադրություն դարձրեց այն ազգային և մշակութային ցայտուն հետագծի վրա, որ թողեց քրիստոնեությունը մեր ժողովրդի կյանքում: Վեր հանեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու նշանակությունը մեր պատմության մեջ՝ որպես մեր ճակատագրի նվիրյալն ու պաշտպանը: Ապա երիտասարդությանը հրավիրեց ջանք ու եռանդ չխնայել՝ Մայր Եկեղեցին ամբողջապես ճանաչելու համար, որպեսզի դառնան նրա հավատարիմ զավակներն ու Եկեղեցին ամուր ու կենսունակ պահող հավատացյալներ:

Վեհափառ Հայրապետի հանդիպումներից հետո այդ երեք հաստատություններում սկսվեցին կրոնագիտական և եկեղեցագիտական դասախոսություններ:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ
(28 փետրվար 1990 թ.)

Այս պահին երջանիկ եմ իմ ողջույնը և օրհնությունը բերելու Բրյուսովի անվան այս կրթական գիտական մեծ հաստատության՝ տնօրենությանը, դասախոսական կազմին, ուսանողությանը և բոլոր ներկաներին:

Ինչպես հիշեց ձեր պրոռեկտորը, առաջին անգամն է, որ Հայաստանում Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում է ունենում բարձրագույն մի կրթական հաստատության, համալսարանական ուսանողության հետ: Արդեն 35 տարի է լրանում, ինչ կաթողիկոս եմ այստեղ՝ Հայաստանում, այսպիսի առիթ չէր ներկայացել: Սա թողունելի է, բնականաբար: Ես խորապես զգացված եմ, որ ձեզ խոսելու առիթը ունեմ այս հարկի տակ: Եվ թույլ տվեք մի պահ մտքով դեպի իմ անցյալը գնալ, մի 60 տարի ետ, երբ ես էլ ձեր տարիքը ունեի մոտավորապես, իբրև Բուխարեստի պետական համալսարանի ուսանող: Ես այնտեղ արձանագրվել էի գրականության և փիլիսոփայության ֆակուլտետում, ընտրելով իբրև առաջին գլխավոր առարկա՝ մանկավարժությունը, երկրորդը՝ հոգեբանությունը և երրորդը՝ ընկերային գիտությունները: Պետք է ասեմ, որ իմ կյանքի ամենալավ հիշատակները ունեմ այդ ժամանակներից: Սարսուռով մուտք էի գործում համալսարանի դռնից և հետևում, թույլ տվեք ասել, շատ բարեխղճությամբ,

գրեթե որևէ դասախոսությունից կամ սեմինարից չեմ բացակայել: Հետևում էի լրջությամբ, ոգևորությամբ և նույնիսկ խանդավառությամբ: Ունեինք շատ որակյալ, գիտական բարձր մակարդակի վրա գտնվող դասախոսներ: Մեկի անունը հատկապես ուզում եմ հիշել, թեև իմ մասնագիտության հետ կապ չուներ, բայց ես մի տարով պարտավոր էի այդ քննությունը հանձնել. դա պրոֆեսոր Նիկոլա Յորգան էր, մեր դարի ամենամեծանուն պատմաբաններից մեկը, որ տարին մի քանի ամիս Սորբոն էր հրավիրվում. և ինչ որ մեզ համար կարևոր է, մասնագետ էր նաև հայոց պատմության, հատկապես Կիլիկյան Հայկական Թագավորության շրջանի, և բարեկամ էր հայ ժողովրդին:

Հիշելով իմ անցյալը՝ նախանձում եմ, որ ես ձեր մեջ չեմ գտնվում այժմ: Իմ առաջին հորդորը, խորհուրդը պիտի լիներ ձեզ ուղղյալ, որ լրջությամբ մոտենաք ձեր ուսման, լավ սովորեք, չբավարարվեք միայն դասախոսի դասախոսություններով, չբավարարվեք միայն՝ վերջում ավարտական վկայական ստանալով: Այդքանը քիչ է: Իմ կարծիքով ամեն բարձրագույն հաստատություն, համալսարան աշխարհի վրա, ուր էլ որ լինի, ամբողջական գիտական պաշար չի կարող տալ որևէ տուսանողի: Ուսանողը ինքն է, որ պիտի շարունակի այդ գործը, այդ աշխատանքը իր սեփական ուժերով, ընթերցումներով, խորացնելով իր գիտելիքները իր ասպարեզի մեջ: Այնպես որ ես ջերմորեն պիտի հանձնարարեի ձեզ, որ այդպես մոտենաք ձեր կոչումին, ձեր աշխատանքին, և ձգտեք ամբարել գիտություն հնարավորին չափ շատ, խորացնել այն և հասնել մտավորական, գիտական բարձր մակարդակի, որպեսզի նաև հետագայում դուք կարողանաք այն փոխանցել ձեր տուսանողներին: Գիտեք, սա կարևոր է ոչ միայն անձնապես ձեզ համար իբրև մասնագետների, այլ կարևոր է նաև մեր ժողովրդի համար: Մենք փոքր ժողովուրդ ենք, ավելի ճիշտ ասած, այնքան էլ փոքր չէինք, բայց շատ փոքր մնացինք և՛ համրանքով, և՛ մեր հայրենիքի տարածքով: Պատմական Հայաստանը, ինչպես գիտեք, մոտավորապես այսօրվա մեր Խորհրդային Հայաստանի տարածքից 8—9 անգամ ավելի մեծ էր: Մնացինք հիմա այսքանով, և թվով փոքր՝ երեք—երեք ու կես միլիոն, այդքան էլ գրեթե ցրված՝ ներքին Սփյուռքում, և արտասահմանում: Բայց ուշադիր եղեք, իմացեք, որ մեր ժողովրդի հիմնական ողնաշարը, հիմնական արժեք ներկայացնողը այս Մայր Հայրենիքի հողի վրա բնակվող ժողովուրդն է: Մյուսները մեզ հետ են իբրև օժանդակ, եթե կարելի է ասել: Եվ նրանք էլ կարողանում են արտասահմանում իրենց հայկական կյանքը շարունակել՝ իրենց հայացքը ուղղած դեպի Մայր Հայրենիք, դեպի Մայր Հայաստան, դեպի Երևան: Առանց մեր այսօրվա Հայաստանի, արտասահմանի հայությունը կարճ ժամանակի մեջ փոշեցրիվ կարող է լինել, և դա բնական երևույթ է: Ամբողջ հայության հույսը, ապավենը և ապագան կեդրոնացած է մեր այսօրվա հայրենի իրականության վրա, հատկապես երիտասարդության վրա: Հետևաբար, այն հարցը, որին ակնարկեցի, թե ձեզանից ամեն մեկը լավ մասնագետ դառնա, միայն անհատապես ձեզ չի վերաբերում, այլ ամբողջ մեր ժողովրդին: Մեր ժողովուրդը իր համրանքով փոքր է այսօր, բայց պետք է աշխատենք նրա գիտական, մշակութային, ոգեկան մակարդակը բարձր պահել և դրանով արժևորել մեր ժողովրդի անունը ոչ միայն մեր երկրում, այլ ամբողջ աշխարհում: Դրա համար, կրկնում եմ, պետք է լուրջ գիտություն, աշխատանք, զոհաբերու-

թյան ոգի և մանավանդ խանդավառության կրակ և հավատք դեպի մեր ժողովրդի ապագան, ինչքան էլ դժվարությունների հանդիպենք այսօր:

Մի՛ վախենաք դժվարություններից: Վերջերս, խոսակցության ժամանակ, մի բարեկամ ասում էր մտահոգված, թե՝ Վեհափառ, ինչպե՞ս պիտի ավարտվի մեր արդար դատը, Ղարաբաղյան դատը: Ես ասացի՝ գիտե՞ք, եթե Ղարաբաղյան դատը անմիջապես, մեր ուզածի պես լուծվեր, դա նման չէր լինի հայոց պատմության: Երկու հազար տարի է գրեթե, մեր ոչ մի քաղաքական հարց մեր ուզած ձևով չէ լուծված: Ամբողջ հայոց պատմությունը մի պայքար է գոյատևման և ինքնապաշտպանության: Եվ գուցե դրա մեջ է գաղտնիքը մեր ժողովրդի հոգևոր մշակութային արժեքների ծաղկման, որովհետև տառապանքների գնով, դժվարությունների գնով է, որ ստեղծվում են մեծ արժեքներ: Հին հռոմեացիք ասում էին «per aspero ad astero» այսինքն՝ «Դժվարությունների ճանապարհով դեպի աստղեր կարելի է հասնել»: Ահա այս հոգեբանությունը, կարծեմ, մենք պետք է որդեգրենք, և ինչ էլ որ լինի ղարաբաղյան հարցի վերջնական կամ ժամանակավոր լուծումը, պետք է պահենք մեր հավատքը մեր ուժերի վրա, մանավանդ մշակութային, ոգեկան ուժերի վրա, պետք է պահպանենք մեր հույսը և ապագայի մեր լավատեսությունը:

Հիմա ես ուզում եմ մի պարագա էլ ընդգծել: Իբրև կաթողիկոս, հոգևորականի իմ հանգամանքով, անշուշտ, առավել խորհրդանշում եմ մեր անցյալը, մեր անցյալի արժեքները: Մեր Եկեղեցին 1700 տարիների պատմություն ունի, աշխարհի ամենավավերական քրիստոնեական Եկեղեցիներից մեկն է, որ ստեղծագործորեն ապրած է քրիստոնեությունը, ոչ թե իբրև դրսից ներմուծված ինչ-որ կրոնական հավատք: Մենք ուղղակի բուն աղբյուրից, Քրիստոսի Ավետարանից, Քրիստոսի առաքյալներից ենք ստացել քրիստոնեական լույսը և յուրովի ստեղծագործորեն, ազգային ձևերով դրսևորել ենք այն և փառավորել աշխարհով մեկ: Ես, իբրև հոգևորական, առավել կապված եմ մեր անցյալ արժեքներին, մեր գրաբար լեզվին, մեր հին մատենագրությանը, մեր հին հեղինակներին՝ սկսած Մեսրոպ Մաշտոցից մինչև 19-րդ դարի հոգևորական մեր հեղինակները: Այնուամենայնիվ, ես պարտք եմ համարում ձեզ այսօր խորհուրդ տալ, որ ծանոթանալով հանդերձ մեր անցյալի մշակույթի արժեքներին, յուրացնելով դրանք, իբրև հիմքը մեր ազգային ժառանգության, պետք չէ բավարարվեք դրանով: Պետք է առաջ գնաք և նոր արժեքներ ստեղծեք, հնի արմատների վրա: Այն ժողովուրդը, որ կանգնած է մնում միայն իր անցյալի արժեքների վրա, մեռնող ժողովուրդ կարող է դառնալ: Տեսեք, վերջին տասնամյակներին մեր ժողովրդի անավոր, ամենամեծ ողբերգությունից հետո, որ եղավ 1915-ի ցեղասպանությունը, երբ մենք կորցրինք մեր ազգի կեսից ավելին, և մեր ժողովուրդը համարյա հուսահատ վիճակի մեջ էր գտնվում, այնուամենայնիվ նա կարողացավ իր ուժերը հավաքել այս վերջին տասնամյակներին ու նոր արժեքներ ստեղծել հնի հիմքերի վրա: Այդպես է, որ ծնունդ առան Եղիշե Չարենցը, Թումանյանը ճարտարապետ, որ Երևանի հայկական քաղաքը ստեղծեց: Գիտության, երաժշտության, նկարչության մեջ մեծեր ունեցանք: Մեր ժողովուրդը կարողացավ, հակառակ իր մեծ ողբերգություններին, իր ուժերը մեկտեղել և նոր արժեքներ ստեղծել: Ուզում եմ հատկապես հիշել մեկի անունը, որ, իմ կարծիքով, առավելագույն չափով ներկայացրել է հայ ժողովրդի ազգային մշակութային արժեքը. դա Արամ Խաչատրյանն է: Իբրև երաժիշտ, գուցե նա միակն է մեր բոլոր մե-

ծերի մեջ, որ համաշխարհային շրջանառության մեջ է գտնվում իբրև հայ ազգային երաժշտական բարձր արժեք: Այս երկնքի տակ ինչքան ժամանակ որ Բախը և Բեթհովենը հնչեն, այնքան ժամանակ պիտի հնչի նաև Արամ Խաչատրյանը: Եվ սա մեզ համար պարծանք է: Այն միտքը ուզում եմ ձեզ հաղորդել, որ հայկական ազգային արժեքները առավել ճառագայթում կստանան, եթե դրանք ազգայինի մակարդակից բարձրանան դեպի համաշխարհայինը, ազգայինը բարձրացնելով համամարդկային մակարդակի վրա: Արամ Խաչատրյանը այդ իրականացրեց երաժշտության բնագավառում: Այս նշմարտությունը թող լինի ուղեցույց ձեզ բոլորիդ:

Եվ կարծում եմ, որ արցախյան այս փոթորկումը, իր բոլոր ողբերգություններով հանդերձ, կարող է նոր ճանապարհ բանալ դեպի նոր ստեղծագործություններ, բյուրեղանան նոր արժեքներ: Այս հրավերը կարդում եմ մեր ամբողջ երիտասարդությանը, ձեզ բոլորիդ:

Ես հոգեպես մխիթարված եմ, որ այս վերակառուցման շրջանին, գործունեության լայն ասպարեզ բացվեց մեր Եկեղեցու առաջ՝ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու առաջ: Ապացույցներից մեկն էլ հենց իմ ներկայությունն է այստեղ, ձեր մեջ: Նոր, ավելի քան 26 վանքեր բացեցինք, որոնցից հինգը Արցախում, երկու նշանավոր վանքերը Ամարասի և Գանձասարի, հետո մեր հոգևորականների թիվը հետզհետե սկսավ աճել, մեր ուսանողների թիվը բարձրացրինք 80-ի, մենք սկսեցինք պատրաստել նորերը, որպեսզի կարողանան բավարարել մեր հավատացյալ ժողովրդի կրոնական կարիքները: Հրաշքի համազոր է, որ մեր ժողովուրդը իր հայացքը դարձրեց միանգամից դեպի իր արմատները՝ նաև եկեղեցական իմաստով, կրոնական իմաստով:

Գուցե պիտի ուզեիք հարցնել ինձ, թե այսօրվա պայմանների մեջ ինչ նշանակություն ունի Հայ Առաքելական Եկեղեցին մեր ազգային կյանքի մեջ: Եկեղեցին անշուշտ, նախ կրոնական հաստատություն է, որի կոչումն է Աստուծո խոսքը քարոզել, Հիսուսի Ավետարանը քարոզել: Մեր Եկեղեցին կոչում ենք մենք առաքելական՝ այն պատմական հիմքի վրա, որ Հիսուսի առաքյալներից երկուսը՝ Ս. Թադեոսը և Ս. Բարդուղիմեոսը, Հիսուսի մահից և Համբարձումից հետո, գնացին դեպի աշխարհի չորս ծագերը՝ տարածելու ավետարանի լույսը: Նրանցից երկուսը անցան նաև Հայաստանից, ուր քարոզեցին քրիստոնեությունը, որով նրանք առաջին սերմերը սերմանեցին առաջին դարում: Հայաստանում քրիստոնյաների համայնքներ կազմվեցին երկրորդ և երրորդ դարերի ընթացքում: Այդ ժամանակներում հայ պետությունը հեթանոսական կրոնք ուներ, բազմաստվածյան մի կրոն՝ նման հելլենական կրոնքին, որ ազգային կրոնք չէր անշուշտ: Հեթանոսականը ներմուծված, նմանեցված էր մի քիչ պարսկական կռապաշտությանը և առավել չափով հելլենական կրոնին: Ապացույց, որ առաջին դարում հայ թագավորների հրամանով, հայերը մի գեղեցիկ տաճար կառուցեցին Գառնիում, որը իր ոճով ոչինչ չունի հայկական ճարտարապետական տեսակետից, այլ հելլենական տաճարների մի ընդօրինակությունն է հանդիսանում: Երրորդ դարում մանավանդ Հայաստանը գտնվում էր քաղաքական սերտ բարեկամական հարաբերությունների մեջ հռոմեական կայսրության հետ, և ամեն անգամ, երբ հռոմեական կայսրությունը հալածում էր քրիստոնյաներին, նույն քաղաքականությանը հետևում էր նաև Հայաստանը, հռոմեական ազդեցության ներքև: Մանավանդ, երրորդ դարու վերջերին հռոմեացոց Դիոկղետիանոս կայսեր օրով, նաև հայոց թա-

գավոր Տրդատը նույն հալածանքները սկսեց Հայաստանի մեջ, երբ զոհվեցին Հռիփսիմյանց և Գայանյանց կույսերը, հենց այնտեղ, ուր այսօր նրանց տաճարները կան: Անհավասիկ այդպիսին եղավ այդ շրջանին հայ քրիստոնյաների ճակատագիրը:

Սակայն 8-րդ դարու վերջերին և 4-րդ դարի սկիզբներին Տրդատ թագավոր, որ ինքը հալածող էր քրիստոնյաներին, անդրադարձավ և ոչ միայն հալածանքը դադարեցրեց և Սուրբ Գրիգոր Լուսավորչին ազատեց Խոր Վիրապի բանտից, այլ ինքը մկրտվեց իբրև քրիստոնյա, իր ամբողջ ընտանիքով և ժողովրդով: Այսպես քրիստոնեությունը դարձավ համայն հայ ժողովրդի ազգային կրոնքը: Հայերը հրաժարվեցին ընդմիշտ հեթանոսական չաստվածների հավատալիքներից: 301 թվին սկսեց կազմավորվել Հայաստանյայց Եկեղեցին:

Շուտով Էջմիածնում խորհրդակցական լայն ժողով պիտի տեղի ունենա, նաև արտասահմանից ժամանած ներկայացուցիչներով, կազմելու համար նախագիծ-ծրագիրը մեր Եկեղեցու 1700-ամյակի տոնակատարությանց, որ տեղի պիտի ունենան 2001 թվականին:

Հարց կնագի, թե ինչո՞ւ համար Տրդատ թագավոր միանգամից շրջեց իր քաղաքականությունը և քրիստոնեությունը ընդունեց: Բնականաբար ազդվեց որոշ չափով Սուրբ Գրիգոր Լուսավորչի կրոնական քարոզչությունից, քրիստոնեական վարդապետության վեհ գաղափարներից, բայց հավանական է, որ նա ունեցավ նաև այլ պատճառ, կարծում եմ քաղաքական: Հայաստանը այն ժամանակ իր աշխարհական դիրքով գտնվում էր հզոր կայսրությունների միջև, արևելքից Պարսկաստանը, հեթանոսական Պարսկաստանը, իսկ արևմուտքից՝ հելլեն հռոմեացիք: Հայ ժողովուրդին վտանգ կսպառնար իր ինքնուրույն դիմագծությունը կորցնելու, իր քաղաքական անկախությունը կորցնելու, գտնվելով պարսկական պետության պարտադիր բարեկամության ներքև: Տրդատ թագավոր որդեգրեց քրիստոնեությունը, որպեսզի գոնե հոգևոր անկախությունը պահպանի հայ ժողովրդի և քրիստոնեությամբ պաշտպանվի հեթանոսական Պարսկաստանից: Եվ այդպես էլ եղավ, քրիստոնեության մուտքով հայ ժողովուրդը իր ազգային դիմագծությունը սկսավ կազմավորել, ձևավորել, մի պրոցես, որ տևեց մոտ 100 տարի: Առաջին շրջանին Հայ Եկեղեցու մեջ հենց Էջմիածնի տաճարում, բոլոր արարողությունները տեղի էին ունենում ասորերեն կամ հունարեն, որովհետև հայերեն գրավոր լեզու չկար: Այդ մեծ գործը իրականացրեց Սուրբ Մեսրոպ Մաշտոց, որ 5-րդ դարու սկզբներին հորինեց հայ լեզվի այբուբենը, թարգմանեց Աստվածաշունչը Սուրբ Սահակի և մյուս թարգմանիչների հետ միասին, հայերեն սքանչելի գրաբար լեզվով, որ մինչև հիմա էլ մենք օգտագործում ենք, և որ գիտնականների հաստատումով, 5-րդ դարի հայերեն թարգմանված Սուրբ Գիրքը նկատվում է թարգմանությունների մեջ թագուհի: Այսպես սկիզբ առավ հայ դպրությունը և հայ գրականությունը: Այսպիսով հիմքերը դրվեցին հայ ժողովրդի ազգային ոգեկանության և մշակույթին:

Հայ Եկեղեցին մի ուրիշ հաղթանակ ևս իրագործեց ազգային տեսակետից. կազմակերպեց և ոգեշնչեց հույն 5-րդ դարում, 451 թվականին Ավարայրի ճակատամարտը, Վարդան Մամիկոնյանի ճակատամարտը ընդդեմ պարսիկներին: Պարսիկները տեսնելով, որ քրիստոնեությունը ընդունելով, հայերը հետզհետե իրենց ազգային գիտակցությունը ամրացրին և անկախացան հոգեպես, որոշեցին քրիստոնեությունը ջնջել Հայաստա-

նից, որպեսզի հայ ժողովուրդը զրկվի այդ հոգևոր ուժից, այդ ոգեկանութ-
թյունից և ընդգրկի պարսկական հեթանոսական, կռապաշտական կրոնքը
և դրանով լրիվ հպատակվի Պարսկաստանին: Պարսիկ արքայի, Հազկեր-
տի այդ որոշումին դեմ ծառացավ Հայ Եկեղեցին, ժողով գումարվեց Ար-
տաշատում Հովսեփ Կաթողիկոսի նախագահությամբ: Վարդան Մամիկոն-
յան և հայ իշխաններ որոշեցին մերժել Հազկերտի հրամանը և մնալ հա-
վատարիմ քրիստոնեական սուրբ հավատքին: Մերժումի պատասխան նա-
մակը մի սքանչելի փաստաթուղթ է ոչ միայն պատմական իմաստով, ոչ
միայն կրոնական իմաստով, այլ նաև գեղարվեստական մի գլուխգործոց
համաշխարհային մակարդակի վրա:

Պարսիկները հզոր բանակով հարձակվեցին Հայաստանի վրա: Վար-
դան Մամիկոնյան և իր քաջերը զոհվեցին Ավարայրում: Քրիստոնեությու-
նը ջնջվեց Հայաստանում, սակայն հայերը չհուսահատվեցին և 30 տարի
շարունակ, ինչպես այսօր պիտի ասենք պարտիզանական կռիվ մղեցին
պարսիկների դեմ, մինչև որ նրանք վերջիվերջո համոզվեցին, թե կարելի
չէ քրիստոնեությունը հայոց հոգուց դուրս հանել: Հաշտություն կնքվեց
պարսիկների և հայերի միջև 484 թվականին, և Հայաստանը վերստին
քրիստոնյա երկիր դարձավ: Ահա այսպես, Հայաստանյայց Եկեղեցու շնոր-
հիվ, կազմավորվեց վերջնականապես նաև հայ ժողովրդի ազգային քա-
ղաքական մտածողությունը, հոգեպես անկախ ապրելու գաղափարը:

Լավ լսեցեք, սիրելի երիտասարդներ, Հայաստանյայց Եկեղեցին, Վար-
դանանք, այդ պատերազմից սկսյալ մինչև այսօր նույն պատերազմը մղեց,
արտաքին պայմաններին հաճախ հարմարվելով, բայց խորքում շարունա-
կեց մղել հայ ժողովրդի հոգեկան անկախության պատերազմը մինչև այ-
սօր: Որով թե՛ կրոնական իմաստով, թե՛ մշակութային իմաստով և թե՛
քաղաքական իմաստով, Հայ Եկեղեցին դարձավ հայ ժողովրդի ազգային
ոգու ստեղծողը, բյուրեղացնողը և պաշտպանը: Մեր շարականները նվիր-
ված Հայ Եկեղեցու հիմնադրության, երգում են՝ «Եկայք շինեսցուք սուրբ
գիսրանն լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի», այսինքն՝ «Եկեք, ժողովուրդ, կառուցենք մեր աղոթքի տունը, այսինքն մեր Եկեղեցին, որովհետև նրանից ծագեց մեզ լույս Հայաստան աշխարհի վրա»:

Ես իմ խոր գոհունակությունն եմ հայտնում, որ ձեր այս կրթական հաստատության ղեկավարությունը, տնօրենությունը որոշել է, որպեսզի այստեղ պարբերաբար դասընթացներ տեղի ունենան, որով դուք կարողանաք ծանոթանալ մեր Եկեղեցու պատմության: Հայ Եկեղեցու պատմությունը հոյակապ մի դյուցազներգություն է կրոնական և ազգային տեսակետով. այդ պատմությանը արժե, որ դուք ծանոթանաք, գիտենաք, թե ինչպես ծնունդ առավ, ինչպես զարգացավ 17 դարեր շարունակ Հայ Եկեղեցին և ինչ իրագործումներ կատարեց հոգևոր իմաստով, գրական-գեղարվեստական իմաստով և քաղաքական իմաստով: Մենք սպասում ենք անշուշտ, որ բացի Հայ Եկեղեցու պատմությունից, մատենագրությունից, նրա հայրենասիրական իրագործումներից, դուք ծանոթանաք նաև բուն Սուրբ Գրքին, հատկապես Նոր Կտակարանին, Հիսուսի կյանքին ու պատգամներին, որոնք բյուրեղացնում են ամբողջապես քրիստոնեական հոգեբանությունը, և բարոյական գաղափարախոսությունը: Հիսուսի ավետարա-

նը՝ մարդասիրական, խաղաղասիրական, ազատասիրության և արդարասիրության մի հոյակապ ուսմունք է, համամարդկային կյանքի հորիզոնի վրա ճառագայթող, երկու հազար տարիներից ի վեր:

Երիտասարդներ, մաղթում եմ ձեզ ուժ, կորով, ներշնչանք, տևապես աշխատելու էռանդ, որպեսզի աճեք, ծաղկեք, հասունանաք և դառնաք մեր ժողովրդի պարծանքը վաղը և միշտ. ամեն: